Փոքրիկ լեզու սովորողներ

Երկլեզու երեխաներ ունեցող
ընտանիքների և ուսուցիչների համար

Child360™ One focus. Every angle.

Ովքեր են երկու լեզու սովորողները:

Երկու լեզու սովորողները (ԵԼՍ) 0-5 տարեկան երեխաներն են, ովքեր սովորում են միաժամանակ երկու կամ ավելի լեզուներ: Ամերիկայի Միացյալ Նահանգներում ավելի քան 11 միլիոն երկու լեզու սովորողներ կան, և ԱՄՆ-ի 3 նախադպրոցական տարիքի երեխաներից մոտավորապես մեկը խոսում է երկու կամ ավելի լեզուներով:

Եթե անձը խոսում և հասկանում է երկու լեզու, նա համարվում է **երկլեզու**: Եթե նա խոսում և հասկանում է երեք կամ ավելի լեզուներ, նա համարվում է **բազմալեզու**:

Մեկից ավելի լեզվի իմացությունը բարելավում է երեխաների ուշադրությունը, խնդիրների լուծման և սոցիալական հմտությունները: Երբ նրանք մեծանում են և դառնում երկլեզու կամ բազմալեզու անձ, նրանք կարող են հաղորդակցվել բազմաթիվ ամենատարբեր փորձ ունեցող մարդկանց հետ, ինչը նրանց տալիս է եզակի առավելություն:

Լեզվի վաղ զարգացումը ցանկացած լեզվում ամուր հիմք է հանդիսանում դպրոցում և կյանքում երեխաների առաջադիմության համար:

Լեզվի ուսուցումը տանը

Երեխայի ընտանիքի անդամների կողմից օգտագործվող լեզուն համարվում է նրա տան լեզուն: Նույնիսկ, եթե տանը օգտագործվող երեխայի լեզուն տարբերվում է դպրոցում ուսուցանվող լեզվից, երեխաները կարողանում են հեշտությամբ սովորել միաժամանակ երկու կամ ավելի լեզուներ, ինչը զարգացնում է ուղեղի աշխատանքը և հաղորդակցման հմտությունները: Ստորև ներկայացվում է, թե ինպես կարող են օգնել ծնողներն ու ընտանիքները՝

Երգեք երգեր, խաղացեք խաղեր և արտասանեք բանաստեղծություն ներ երեխաների տան լեզվով նոր բառեր սովորելու համար:

Երեխաների համար բարձրաձայն ընթերցեք պատմվածքներ իրենց տան լեզվով: Տան լեզվի հիմք կառուցելով՝ նրանք ավելի հեշտությամբ կսովորեն այլ լեզուներ:

Մանուկ հասակում լեզուն միաժամանակ ապահովում է սոցիալական և զգայական զարգացում: Բոլոր սոցիալական հաղորդակցություններում և առօրյա գործունեության ժամանակ, դուք կարող եք խոսել երեխաների հետ, ծանոթացնել նոր բառերի հետ իրենց տան լեզվով, ինչպես նաև այդ նույն բառերը ասել տարբեր լեզուներով: Այս ամենը կարելի է անել խաղալու, ուտելու, լողանալու, քնելիս կարդալու ժամանակ և այլն:

Լեզվի ուսուցումը տանը և դպրոցում

Ընտանիքի ներգրավվածությունը դպրոցում հանգեցնում է երեխայի սոցիալական հմտությունների, զարգացման և առաջադիմության ավելի լավ արդյունքների: Անկախ լեզվի իմացության պաշարի, ստորև ներկայացվում է, թե ինչպես փոքրիկների ուսուցիչները մշակութային վայրում կարող են աշխատել ընտանիքների հետ լեզվի ուսուցման ընթացքը առաջ տանելու համար՝

Ժողովների կամ ճաշկերույթների կազմակերպում, որպեսզի ընտանիքները հանդիպեն միմյանց, հաղորդակցվեն:

Երկլեզու գրքերի գրադարանի ստեղծում, որպեսզի ընտանիքները վերցնեն և կարդան տանը:

Ընտանիքի անդամների հրավեր դասարան իրենց տան լեզվով գրքեր կարդալու և գործունեություն իրականացնելու համար:

Ստեղծել ընդհանուր համագործակցության եզրեր ընտանիքի անդամների և թարգմանիչների հետ՝ ստեղծելու համար աջակցություն ցուցաբերող ցանց այն ընտանիքների համար, ում տան լեզուն տարբերվում է դպրոցում դասավանդվող լեզվից:

Երկու լեզվով ուսուցման դասարաններ

Երեխաների տան լեզուների օգտագործումը վաղ կրթության մեջ օգնում է ուղեղի աշխատանքի զարգացմանը: Գոյություն ունի դասարանում մեկից ավելի լեզվի ներառման մի քանի եղանակ՝

Երկլեզու դասարաններում երեխաները իրենց ուսուցիչներից լսում են մեկից ավելի լեզուներ: Այս դասարաններում կարող է դասավանդել մեկ երկլեզու ուսուցիչ, ԿԱՄ միասին համագործակցող երկու ուսուցիչ, ովքեր տիրապետում են տարբեր լեզուների:

Տարբեր լեզուներով խոսողների դասարաններում երեխաները լսում են ավելի քան մեկ լեզու իրենց դասընկերներից: Որպես օրինակ կարելի է բերել այնպիսի դասարան, որտեղ երեխաների կեսը խոսում են հիմնականում անգլերեն, իսկ մյուս կեսը՝ իսպաներեն: Դասընկերների հետ հաղորդակցվելիս երեխաները կսովորեն երկու լեզուները:

Երբեմն երեխաները օգտագործում են երկու լեզու միևնույն նախադասության մեջ կամ օգտագործում են տարբեր լեզուներ տարբեր մարդկանց հետ խոսելիս: Սա **լեզվական վերակոդավորման** օրինակ է, որը տարածված և օգտակար է երեխաների լեզվական հմտությունների զարգացման համար:

Լեզվի ուսուցումը դպրոցում

Մեկ լեզվի տիրապետող ուսուցիչները կամ այն ուսուցիչները, ում տան լեզուն տարբերվում է իրենց տարածաշրջանում օգտագործվող տան լեզուներից, կարող են բոլոր երեխաներին տրամադրել վաղ լեզվի զարգացում: Անկախ այն բանից, թե քանի լեզվի եք տիրապետում՝

Սովորեք հիմնական բառերը երեխայի տան լեզվով (ինչպես օրինակ՝ «խնդրեմ», «շնորհակալություն», «այո», «ոչ», «օգնել», «լոգասենյակ» և «դուրս») դասարանում հաղորդակցությունը ավելի հեշտացնելու համար: Սա նաև հարգանք է առաջացնում տան լեզուների նկատմամբ:

Օգտվեք ոչ վերբալ հաղորդակցության հնարավորությունից լեզվի արգելքները հաղթահարելու համար: Ձեռքի ժեստերը, նկարները և այլ տեսողական գործիքները կարող են օգնել երեխաներին շփվել միմյանց և դասարանի մեծահասակների հետ:

Ակտիվ մասնակցություն ապահովող խմբակային պարապմունքները խրախուսում են խոսելը և թույլ տալիս, որ երեխաները մասնակցեն ոչ վերբալ եղանակով: Երեխաները սովորում են նոր բառեր լսելով, իսկ երկլեզու երեխաները կարող են օգնել իրենց միալեզու ընկերներին, ովքեր տիրապետում են միևնույն տան լեզվին:

Ընթերցեք միևնույն գիրքը բազմաթիվ անգամ տարբեր լեզուներով: Սկզբում փորձեք հասկանալ ընթերցելով երեխայի տան լեզվով (ընտանիքի անդամի կամ հասարակության անդամի օգնությամբ, հարկ եղած դեպքում): Այնուհետև ընդլայնեք նրանց բառապաշարը՝ ընթերցելով գիրքը ամենից շատ դասարանում օգտագործվող լեզվով:

Ստեղծեք սոցիալական հնարավորություններ երեխաների համար գործընկերոջ հետ լեզուն կիրառելու համար: Հիմնեք դրամատիկ պիեսի կենտրոն կոստյումներով և կենցաղային իրերով: Ծանոթ տեսարանները կատարելիս թույլ տվեք, որ երեխաները օգտագործեն իրենց տան լեզուն հաղորդակցվելու և միմյանցից սովորելու համար: Սա կարող է նաև տեղի ունենալ, երբ դուք երեխաներին զույգերի եք բաժանում փոքր հանձնարարություններ կատարելու համար, ինչպես օրինակ ընդմիջման ժամ կամ դասարանի բույսերի ոռոգում:

Child360™

One focus. Every angle.

Child360.org

Child360 –ի նպատակն է աջակցել երեխայի զարգացմանը սկսած ծննդյան ժամանակվանից, ստեղծել ապագա, որտեղ յուրաքանչյուր երեխա հնարավորություն ունի հաջողությունների հասնել դպրոցում և կյանքում:

Child360 հավատում է, որ բիլինգվիզմի առավելությունն է ուղեղի աշխատանքի զարգացումը: Մենք աջակցում ենք երկու լեզու սովորողներին՝ ստեղծելով տուն-դպրոց կապը, խրախուսելով ուսուցիչներին մարմնավորել բազմաթիվ լեզուներ և մշակույթներ դասարանում և օգնելով զարգացնել հմուտ և տարաբնույթ վաղ կրթություն:

Լրացուցիչ ռեսուրսների համար խնդրում ենք սեղմել այստեղ.

Head Start's Dual Language Learners Toolkit

Colorín Colorado's Tip Sheets for Parents

First 5 California's Dual Language Learner Resource Guide

© Child360. All rights reserved. Designed by Child360.
Icons made by Freepik, Icons8, Google from www.flaticon.com. Licensed by CC BY 3.0.